եռականհիւս ձուլածութեամբ, եռ գլխեան ի ձև վիշապաց ունի ընդ ինքեան: Ասեն վասն սորա՝ թէ տըլըսմ է յաղագս օձից, զի մի բազմասցի ի քաղաքս և կամ թունաւորեսցի(*): Եւ մեծամեծք և զօրագլուխք վերոյ ասացեալ ճամին նստան մուհտուին հանդերձ՝ առ ի յուզումն իրին, և նախ խնդրեցին զվէզիրն Ահմէտ(**), որ ի գիշերիս փախստական էր լեալ ի տուն ումեմն իշխանի զի ապրեսցի: Եւ նա ըմբըռնեալ ետ ի ձեռս նորանիստ վէզիրին, և ի նմանէ խեղդամահ լեալ սատակեցաւ և ընկեցաւ ի մէջ ասպարիսին ի տես ռամկին: Եւ յետ պահու ինչ եկն ժանդ և դառնահոգի ղաղէսքէրն(***) ի մէջ ամբոխին, ընթացաւ յերկրպագութիւն մուհտոյն, և նա ոչ եթող հպիլ առ ինքն, այլ նախատանօք յետս կացոյց, և նա ի նոյն տեղօջ սրախողխող լեալ սատակեցաւ ի զօրացն և ընկեցաւ մերձ առ միւս մարմնոյն, որ և զօրացն սուր եդեալ ի վերայ նոցա յօշօշեցին սատակեալ մարմինք նոցա, և այնպէս կորեան ղաղէսկէրն և վէզիրն, չարքն՝ չարեօք: Եւ ապայ սկսան վիճիլ ընդ թագաւորին և բազում բանիւք մարտեան ընդ նմա: Իսկ թիկնապանք թագաւորին խորհրդով միացան ընդ զօրացն, և յետ բազում ընթացան միահաղոյն խուռն ամբոխիւ յապարանս թագաւորին և ընդդիմացան ճակատ առ ճակատ և ասացին բազում բանս նախատանաց ընդ նմա: Եւ մայրն աղաղակէր՝ թէ Զի՞նչ չարութիւն արար որդի իմ, ո՜յ մեծամեծք իմ, և այժմ զի՞նչ ես կամիք արասցէ ձեզ: Եւ անգոսնեալ մուհտուն զնա ասելով. Կարկեա՛յ զբերան քո, ո՛վ կա-

(*) **Լուս.** ...*ելի Լևոն* ...*փոսէ որ* ... *է Յունաց* (Ինչպէս հոս՝ նմանապէս յաջորդներուն մէջ կէտեր նշանակուած տեղերը դանակի տակ ինկած են ձեռագրին կազմուած ատեն):

(**) **Լուս. օտար գրչէ.** *Հազար փարէ Ահմէտ փաշա:*

(***) **Լուս.** *որ կոչ* ... *օղլան* ... *ւ զէվ* ...